Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
հունիսի 29-ի նիստի N 28
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ՆՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	**Միջոցառման անվանումը**	**Նպատակը, խնդիրը**	**Կատարողը (համակատա-ողը(ները)**	**Ժամկետը**	**Ֆինանսա-վորման աղբյուրը**	**Միջոցառումների կատարման վերստուգելի չափանիշը**	**Ակնկալվող արդյունքը**
1.	*Դիլիջան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների (այսուհետ՝ հուշարձաններ) պահպանվածության վիճակի, օգտագործման բնույթի մոնիթորինգի իրականացում*	1) հուշարձանների հաշվառում, դրանց հետագա պահպանությանն ուղղված միջոցառումների հստակեցում 2) Դիլիջան քաղաքի զարգացման ընթացքում հուշարձանները և դրանց պատմական միջավայրը վերջին հարյուրամյակի ընթացքում զգալիորեն փոփոխվել և աղճատվել են, պատմաճարտարա-պետական հուշարձան-ների կառուցողական	Դիլիջանի համայնքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մշակույթի նախարարություն	2017 թվականի հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	հուշարձանների հաշվառման փաստաթղթերում՝ վկայագրերում առկա տվյալների ճշտում, ներդիր-ների և վավերա-գրական նյութերի (լուսանկար, հատակագծեր, գծագրական նյութեր և այլն) պատրաստում և լրացում	հուշարձանների առկայության, դրանց փոփոխությունների, և պատմամշակու-թային տարրերի վերաբերյալ տվյալների փաստագրում

		առանձնահատկություն-ները վերակառուցումների և նորոգումների պատճառով մատնվել են կորստյան կամ խիստ վնասվել, վերափոխվել են և կորցրել պատմամշա-կութային արժեքավոր տարրերը					
2.	*Հուշարձանների տարածքների կադաստրային տվյալների համապատասխանեց ում դրանց ճշգրտված տվյալների հիման վրա, գույքային իրավունքների գրանցման հնարավորության ստեղծում*	1) հուշարձանների տարածքների գույքային պատկանելության հստակեցում, վկայականների ձեռք-բերում, պահպանության սուբյեկտների և օգտագործվող հուշարձանների պահպանության գործընթացների ապահովում 2) քաղաքի վարչական տարածքում գտնվող հուշարձանների նկատմամբ գույքային իրավունքների գրանցում հիմնականում չի կատարվել, իսկ զգալի թվով լքված կառույցների պատկանելությունը, պահպանությունը և օգտագործման բնույթը ճշգրտման կարիք ունեն	Դիլիջանի համայնքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մշակույթի նախարարություն	2017 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ չունեցող հուշարձանների վկայականների ձեռքբերում	հուշարձանների նկատմամբ գույքային պատկանելության հստակեցում, պահպանության գործընթացների կազմակերպում

3.	*Հուշարձանների տարածքների ճշտում, պահպանական գոտիների նախագծերի կազմում (լրամշակում) և դրանց օգտագործման պայմանակարգերի (ռեժիմ) սահմանում*	1) հուշարձանների տարածքների և պահպանական գոտիների սահմանների ճշտում, գոտիների օգտագործման պայմանակարգերի սահմանում 2) մշակվել են 32 հուշարձանի պահպանական գոտիների նախագծեր, որոնցից հաստատվել է 10-ը, ինչը հնարավորություն չի տվել հստակ առանձնացնել պահպանական գոտիների սահմանները և կանոնակարգել դրանց օգտագործման պայմանակարգերը: Այն անհրաժեշտ է հուշարձանների պատմական միջավայրի պահպանությունն ապահովելու համար	Դիլիջանի համայնքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	2018 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	146 միավոր հուշարձանների պահպանական գոտիների նախագծերի կազմում, թվայնացում WGS84 համակարգով, թղթային օրինակների թողարկում	քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագծում պահպանական գոտիների ներառում, պատմական միջավայրի պահպանական միջոցառումների սահմանում, հուշարձաններ ներառող հատվածների կառուցապատման աշխատանքների համակարգում
4.	*Հուշարձաններ ներառող հատվածների գնահատում, դրանցում*	1) քաղաքի պատմական կերպարի, պատմական միջավայրի և պատմամշակութային հուշարձանների	Դիլիջանի համայնքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մշակույթի նախարարություն	2018 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	հուշարձանների վերականգնման և տարածքների բարեկարգման նախագծանախահաշվային	հուշարձանների և պատմական միջավայրի վերականգնում, տարածքների բարեկարգում

	հուշարձանների պատմական կերպարի վերականգնման և օգտագործման հնարավորությունների հստակեցում, դրանց համապատասխան նախագծային առաջարկների կազմում, վերականգնման աշխատանքների նախատեսում	վերականգնման և օգտագործման աշխատանքների ծրագրավորում, պատմամշակութային հիմնավորման նախագծում, վերականգնման ժամանակացույցի սահմանում 2) զգալի թվով հուշարձաններ գտնվում են վթարային և անխնամ վիճակում, դրանց արտաքին տեսքը կրել է փոփոխություններ, շրջակայքը ոչ բարեկարգ վիճակում է	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ՀՀ Տավուշի մարզպետարան			փաստաթղթերի կազմում, ժամկետների (փուլային) սահմանում	
5.	*Զբոսաշրջային երթուղիների մշակում, ենթակառուցվածքների ստեղծման ծրագրավորում*	1) հուշարձանների ներառում զբոսաշրջային երթուղիներում, ենթակառուցվածքների անհրաժեշտության հիմնավորում, ըստ բնույթի տեղավայրերի հստակեցում 2) զբոսաշրջային երթուղիների արդյունավետ օգտագործում, սպասարկման լիարժեք համակարգի ձևավորում	Դիլիջանի համայնքապետարան (համաձայնությամբ) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտե ՀՀ մշակույթի	2018 թվականի ապրիլի 2-րդ տասնօրյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	զբոսաշրջության նպատակով ենթակառուցվածքների և սպասարկման օբյեկտների ստեղծում, ինչպես նաև սպասարկող անձնակազմի պատրաստում	զբոսաշրջության զարգացում, քաղաքի բնակչության զբաղվածության ապահովում

			նախարարություն				
6.	Գնահատված և հստակեցված ծրագրային տվյալների հիման վրա պատմամշակութային հիմնավորման նախագծային փաթեթի մշակում և ներառում քաղաքի գլխավոր հատակագծում	1) քաղաքի զարգացմանն ուղղված կառուցապատման ծրագրերում հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության ապահովում 2) քաղաքի պատմական կերպարի վերականգնման ապահովման նպատակով կառուցապատման հեռանկարային պլանների հստակեցում	Դիլիջանի համայնքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ՀՀ Տավուշի մարզպետարան	2018 -2020 թվականներ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	Հայաստանի Հանրապետու-թյան կառավարության կողմից գլխավոր հատակագծի լրամշակված նախագծի հաստատում	քաղաքի պատմական կերպարի վերականգնում, հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովում, զբոսաշրջության զարգացում